

ՀՈՅՈՎՐԴԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Չ. 4. Ա. 7. 24


Պ. ԼԵՐՄՈՒՏՈՎ

ԱՇԾՎԱ ՊԱՐԻԲ

(Տաճկական հէքիաթ) .

Թարգմ. Կար. Միքանեան.

ՀԵՐԱԿԱՆ ԿՐՈՎ.



№ 2

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄՈՒՏ» Գրաֆուկայիս փող.

1911

Հրամ

2-3992a

ԳՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

25 SEP 2006

2-3992a

25 NOV 2010

891.71

L-46

Մ. ԼԵՐՄՈՒՏՈՎ

ԱՇԸՆ ՂԱՐԻԲ

(Տաճկական հետափաթ).

Թարգմ. Կար. Միքանեան.

№ 2

Գինը եղանակով կռող.

ИМВ. № 20488

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄՈՒՏ» Գրաֆուկայեա վող. 6

1911

000 0 2. 05. 2013

14483

ՕՐՈՒ ՎՈՒ ՏՅԱ

ԱՅԵԼ ՂԵՐԻՔ

(Տաճկական

հէքիսիթ).



Գաղ ժամանակ Թիֆլիսում մի հարուստ
թուրք է լինում։ Ալլահը շատ ոսկի էր տւել նրան,
բայց իր միամօր աղջիկ Մահուլ-Մեհրին ոսկուց
էլ աւելի թանգ էր նրա համար։ Սիրուն են եր-
կնքի աստղերը, բայց աստղերից գէնը հրեշտակ-
ներ կան, ու նրանք էլ աւելի են սիրուն։ սի-
րուն են Թիֆլիսի ջահել աղջկերը, բայց նրանց
միջի ամենից սիրունը Մահուլ-Մեհրին է։

Այդ ժամանակ Թիֆլիսում մի Աղդ Ղարիբ էլ է



40731-63

լինում: Բացի իր մաքուր սրտից և երգելու ջնորհքից, Մարգարէն էլ ուրիշ բան չէր տւել նրան: Դնում էր հարսանիքներ, սազ ածում, թուրքեստանի հին իգիթների գովքն ասում և հարուսա ու բախտաւոր մարդկանց սրտերը ուրախ անում: Մի հարսանիքում նա տեսնում է Մահուլ-Մեհրիին, տեսնում է, ու սիրահարւում են իրար վրայ: Աշըղ Ղարիբը շատ էլ յոյս չի ունենում իր մուրազին համնելու և մոայլ է դառնում ձմրան երկնքի պէս:

Մի անգամ այգում խաղողի վազի տակին պառկած քնով է լինում: Այդ ժամանակ Մահուլ-Մեհրին իր ընկերուհիների հետ անց է կենում մօտովը. աղջիկներից մէկը նկատում է քնած Աշըղին, մօտենում է նրան ու երգում.

«Ի՞նչ ես քուն եղել վաղի տակ, վեր կաց, յիմար, որսդ անցաւ»:

Աշըղը աչքը բաց է անում թէ չէ, աղջիկը, ոնց որ մի ծիտ, թըռոռ, փախչում է: Մահուլ-Մեհրին լսում է երգը և նախտառում է իր ընկերուհուն:

—Բայց թէ իմանաս, ում համար էի երգում,

դեռ ինձանից ջնորհակալ կլինես. ախր դա քու Աշըղ Ղարիբն է,—ասում է:

—Որ այդպէս է, տար ինձ նրա մօտ,—ասում է Մահուլ-Մեհրին:

Գնում են:

Մահուլ Մեհրին տեսնում է նրա տխուր դէմքը, սկսում է հարց ու փորձ անել, միսիթարել:

—Ել մնց չտխրեմ,—ասում է Աշըղ Ղարիբը,—ես քեզ անչափ սիրում եմ, բայց երբէք իմս չես լինի:

—Սրի հօրս մօտ, իմ ձեռքը խնդրիր,—ասում է Մահուլ-Մեհրին,—հայրսիր վրայ կվերցնի հարսանիքի ծախքը և այնքան փող կտայ ինձ, որ երկուսիս էլ հերիք կանի:

—Լաւ,—պատասխանում է Աշըղը, —ասենք, Այաք-Աղան ձեռքից եկածը չի խնայիլ իր աղջկայ համար, բայց ինչ իմանաս, թէ դու մի օր չես վեր կենայ ու երեսովս չես տայ, որ ես ոչինչ չեմ ունեցել ու ամեն ինչ քեզ եմ պարտական: Զէ, իմ սիրուն Մեհրի, ուխտ եմ արել, որ կամ եօթը տարի աշխարհէ աշխարհ շրջեմ, հարստութիւն ձեռք բերեմ, կամ գլուխս առնեմ, հեռաւոր

անապատները կորչեմ։ Թէ խօսքիս հաւան ես,
եօթը տարուց յետոյ իմս կլինես։

Մահուլ-Մեհրին համաձայնում է, բայց աւելացնում։

—Եթէ նշանակած օրը չվերադառնաս, ես
Խուրշուդ բէկին կերթամ։ Նա վաղուց աչք ունի
ինձ վրայ։

Աշըդ Ղարիբը գնում է մօրը մօտ, նրա օրհնանքն
առնում, համբուրում է փոքր քրոջը,
ուսից մի պարկ գցում և, պանդխտական ցուպը
ձեռքին, Թիֆլիսից գուրս է գնում։ Շատ չանցած
ճամփին մի ձիաւոր է հասնում նրան։ Նայում
է, տեմնում՝ Խուրշուդ բէկին է։

—Էդ ուր բարով, —ձայն է տալիս բէկը, —ուր
էլ գնաս, ղարիբ ախպէր, քու ընկերն եմ։

Շատ էլ Աշըդի սրտովը չէր այսպիսի ընկերը,
բայց ճարն ինչ։ Վեր են կենում, միասին
գնում են։ Վերջապէս, հասնում են մի գետի։
Ոչ կամուրջ է լինում, ոչ ծանծաղուտ, որ անցնեն։

—Զուրը մտիր, —ասում է Խուրշուդ բէկը, —
ես էլ ետեիցդ կգամ։

Աշըդ հանում է հազի շորը, գետը մտնում

Դուրս է գալիս միւս ափը, ետ նայում՝ ոհ
ամենակարող Ալլահ, թշնամուս աչքը չտեսնի, ինչ
որ նա է տեսնում։ Խուրշուդ բէկը շորն առնում,
ձին շուռ է տալիս դէպի Թիֆլիս։ միայն թոզն է, որ
օձի պէս ոլոր-մոլոր բարձրանում է հարթ դաշտում։

Բէկը Թիֆլիս հասնելուն պէս, Աշըդ Ղարիբի
շորը տանում է նրա պառաւ մօրը։

—Տղադ խոր գետի մէջ խեղդւեց, —ասում
է, —ահա շորը։

Խեղճ մայրը մղկամով, ընկնում է իր
սիրելի որդու շորի վրայ ու աղի արցունք
թափում։ ապա վերցնում, գնում է իր տղի
նշանածի մօտ ու ասում։

—Տղաս խեղդւել է, ահա Խուրշուդ բէկը
բերաւ նրա շորը. ազատ ես։

Մահուլ-Մեհրին ժպառում է ու ասում։

—Մի հաւատայ, այդ ամենը Խուրշուդ բէկին
է հնարել, Մինչև եօթը տարին չբոլորի, ես
մարդու գնացողը չեմ։ —Ասում է, պատից վէր է
բերում սազը և սկսում է խեղճ Աշըդ Ղարիբի
սիրած երգն երգել։

Ճամփորդ Աշըղը մերկ ու բորիկ հասնում է մի գիւղ: Բարի մարդիկ շոր են տալիս նրան, կերակրում են. նա էլ փոխարէն հրաշալի երգեր է երգում նրանց համար: Այսպէս գիւղից գիւղ, քաղաքից քաղաք անցնելով, նրա համբաւը ամեն տեղ յայտնի է լինում: Վերջապէս Աշըղ Ղարիբը համնում է Հալէպ: Մտնում է սրճարան, սազ է խնդրում և սկսում է երգել: Այդ ժամանակ Հալէպում աշուղների խիստ սիրահար մի փաշա է լինում: Դու մի ասիլ, շատ աշուղ են լինում նրա մօտ տարած, բայց ոչ մէկին չէր հաւանում: Նրա չառշների վրայ, շատ վազվղելուց էլ հալ չէր մնացել: Մէկ էլ սրճարանի մօտից անցնելիս մի սքանչէլի ձայն են լսում: Ներս են մտնում:

— Արի մեծ փաշայի մօտ, — բացականչում են նրանք, — թէ չէ տեղովդ կկորչես:

— Ես ազատ մարդ եմ, Թիֆլիսից եկած, — ասում է Աշըղ Ղարիբը, — կուզեմ՝ կզամ, կուզեմ՝ չէ. երգում եմ, երբ քէփս տալիս է, ձեր փաշան հօ գլխիս տէրը չէ:

Էլ չեն հարցնում, բռնում, տանում են փաշայի մօտ:

— Երգիր, — ասում է փաշան, և նա երգում է:



Երգի մէջ նա իր Մահուլ-Մեհրիի գովքն է անում, և այդ երգն այնպէս գուր է գալիս փաշային, որ խեղճ Աշըղ Ղարիբին թողնում է իր մօտ: Շատ ոսկի ու արծաթ է ստանում նա, շողշողում են հագի թանգ շորերը: Բախտաւոր և ուրախ կեանք է անց կացնում ու շատ է հարստանում: Մոռացել էր իր Մահուլ-Մեհրիին թէ չէ՝ չգիտեմ, միայն պայմանաժամը լրանում էր, վերջին տարին անցնելու վրայ էր, իսկ նա գնալու մասին չէր էլ մտածում:

* * *

Գանք գեղեցիկ Մահուլ-Մեհրիին: Եօթը տարի
էր խեղճի աչքը ճամփին էր: Մի օր էլ լսում է,
որ մի վաճառական պիտի ուղեղորդի քարւանով,
քառասուն ուղտով և 80 ստրուկով: Կանչում է
նրան իր մօտ, մի ոսկի թաս Է¹⁾) տալի ու ասում:

—Առ այս թասը, ինչ քաղաք էլ որ մտնես,
դիր խանութիդ մէջ և ասա՝ ով թասին տէր կլինի
ու կհաստատի, թասը նրան կտրուի, բացի դրանից
թասի քաշով էլ ոսկի կստանայ:

Վաճառականը ճանապարհ է ընկնում. ամեն
տեղ կատարում է Մահուլ-Մեհրիի յանձնարարու-
թինը, բայց մէկը չի գուրս գալի, ասում, թէ
թասը իրենն է: Իր տարած ապրանքը համարեա
ծախում, վերջացնում է, մնում է մի քիչ բան,
այն էլ վերցնում, գնում է Հալէպ: Այստեղ էլ
յայտարարում է Մահուլ-Մեհրիի ասածին պէս:
Լսում է Աշըլ Ղարիբը, շտապում է քարւանսարա
և թիֆլիսեցի վաճառականի խանութում տեսնում
է ոսկի թասը:

¹⁾ Այս թասը Սուրբ Սարդիսն էր տեղ Աշըլ Ղա-
րիբին երազում: Աշըլ Ղարիբը օտարութիւն գնումի
թողել էր իր նշանածին:

Սանօթ. թարգմանչի.

—Սա իմն է,—ասում է ու թասը վերցնում:
—Քոնն է,—ասում է վաճառականը,—Աշըլ
Ղարիբ, ես քեզ ճանաչեցի: Դէ, վեր կաց, շուտ
գնա թիֆլիս. զու Մահուլ-Մեհրին ապսպրեց քեզ
ասեմ, որ ժամանակը լրանում է, և եթէ նշանա-
կած օրը թիֆլիս չլինես, ուրիշ մարդու կերթայ:

Աշըլ Ղարիբը յուսահատութիւնից գլուխը
ձեռքերի մէջ է առնում, չի իմանում՝ ինչ անի.
մնում էր միայն երեք օր: Այսուամենայնիւ ձի է
նստում, վերցնում է ոսկով լիքը քսակը ու չափ
գցում, անխնայ, առանց դադար առնելու: Վեր-
ջապէս յոգնած ծիաւորը անշնչացած ընկնում է
երգինկեան սարի վրայ, որ գտնւում է երգին-
կեանի ու երգրումի մէջ: Ինչ անելը չի իմանում:

Երգինկեանից մինչև թիֆլիս երկու ամսւայ
ճանապարհ, իսկնա միայն երկու օր ժամանակունի:

—Ով ամենակարող Ալլահ,—բացականչում
է նա, —թէ որ ինձ օգնելու չես, էլ ինչու ապրեմ
երկրի վրայ: —Ասում է ու ուզում է իրեն քարի
գլխից զցի: Մէկ էլ ցածում մի մարդ է տեսնում
սպիտակ ծիու վրայ նստած ու լսում է նրա բարձր
ձայնը.

— Օղան (պատանի), այդ ի՞նչ ես անում:
— Ուզում եմ մեռնեմ,—պատասխանում է

Աշըղը:

— Որ այդպէս է, ցած արի, ես կսպանեմ:
Աշըղը հազիւ կարողանում է քարի գլխից իջնել:
— Հետեիր ինձ, — սաստում է ձիաւորը:
— Չեմ կարող, — ասում է **Աշըղը**, — քու ձին
քամու պէս է թռչում, իսկ ես ծանրաբեռնած եմ
պարկով:

— Ճիշտ ես ասում, դէ, պարկդ թամբիցս կա-
պիր ու հետեիր:


Աշըղ Ղարիբը շատ է աշխատում, չի կարում
համնի:

— Հ՞ը, ի՞նչ ես ետ մնում, — հարցնում է
ձիաւորը:

— Բա կարամ հասնեմ, — ասում է **Աշըղը**, —
քու ձին մտքից էլ արագ է սլանում, իսկ ես ար-
դէն յոզնած եմ:

— Լաւ ես ասում, դէ, քամակս նատիր ու
ճիշտն ասսա՛ հւը ես զնում:

— Մի երզում էլ է հասնեմ, — պատասխա-
նում է **Աշըղը**:



— Դէ, աչքդ խփիր: —
Խփում է: — Բաց
արա:

Աշըղը տեսնում է՝
էրզումի պատերը
սպիտակին են տալիս,
մինարէները փալվլում
են:

— Աղա, քեզ մա-
տաղ, — ասում է **Աշը-
ղը**, — սխալւեցի, ու-
զում էի ասեմ, թէ
Ղարս եմ գնում:

— Դէ, տեսար, — ասում է ձիաւորը, — հօ ասի,
որ ճիշտ խօսես: Խփիր նորից: Բաց արա հիմի:
Նայում է **Աշըղը**, չի ուզում աչքերին հա-
ւատալ՝ Ղարսն է առաջը. այստեղ ձիաւորի ոտ-
ներն է ընկնում ու ասում.

— Ներողութիւն, Աղա, քու ծառայ **Աշըղ Ղա-
րիբը** կըկին մեղաւոր է քու առաջ, բայց դու էլ լաւ
գիտես, որ եթէ մի մարդ առաւօտը վճռի սուտ

խօսել, մինչև իրիկուն սուտ կխօսի: Ճիշտն ասած,
ես Թիֆլիս եմ գնում:

—Այ թէ սուտասան ես եղել,—բարկանում
է ձիաւորը,—բայց ի՞նչ արած, ներում եմ: Դէ,
աչքդ խփիր: Բաց արա հիմի,—աւելացնում է
նա մի ըռպէջ յետոյ:

Աշըղը ճշում է ուրախութիւնից, տեսնում
է, կանգնած են Թիֆլիսի դռանը: Աշըղ Ղարիբը
անկեղծ սրտով չնորհակալութիւն է անում և,
թամբի վրայից իր պարկն առնելով՝ ասում է
ձիաւորին.

—Աղա, ի՞նչ խօսք, քու արած լաւութիւնը
շատ է մեծ. բայց արի մի լաւութիւն էլ արա:
չիմի որ պատմեմ, թէ մի օրում էրզինսկեանից
Թիֆլիս հասայ, չեն հաւատալ՝ արի ինձ մի նշան
տուր:

—Կուացիր,—ասում է ձիաւորը ժպտալով,—
ձիու ոտի տակի հողից մի բուռը վեր առ, ծոցդ
դիր, եթէ խօսքերիդ չհաւատան, հրամայիր, որ
մօտդ եօթը տարւայ կոյր կին բերեն, քսիր աչ-
քերին ու նա կտեսի:

Աշըղ Ղարիբը սպիտակ ձիու ոտի տակի հո-

ղից մի բուռը վեր է առնում, բայց դեռ գլու-
խը չբարձրացրած—ձիաւորն ու ձին անհետա-
նում են: Այսաեղ ահա նա գլխի է ընկնում, որ
իրեն օգնողը Խըզը էլեասն է (Սուրբ Սարգիսը):

* * *

Ուշ երեկոյեան հազիւ կարողանում է իրենց
տունը գտնել: Դողդոջուն ձեռքով ծեծում է
դուռը և ասում:

—Անա, անա (մայր), բաց արա. Աստծու հիւրն
եմ, քաղցած ծարաւի, խնդրում եմ զարիք տը-
ղիդ սիրուն, ներս առ:

Պառաւը թոյլ ձայնով պատասխանում է.

—Թէ ուզում ես գիշերել հարուստ ու շէն
օջախներ գնա. հիմա քաղաքումս հարսանիքեր
կան, այնտեղ գնա՝ կարող ես գիշերը ուրախ
անց կացնել:

—Անա,—պատասխանում է Աշըղ Ղարիբը,—
ես այսաեղ ծանօթ մարդ չունիմ, դրա համար
նորից ինդրում եմ: Թէ բու Ղարիք տղիդ սիրում
ես, ներս առ ինձ:

Այն ժամանակ աղջիկն ասում է մօրը.

—Մայր, վեր կկենամ, դուռը բաց կանեմ:
—Այ ոչու փուշ լինես,—մըմքթում է պառաւը, —
սրտիդ ուզածն էլ այն է, որ ջահել տղերանց
տուն բերես, հիւր ընդունես, գիտես, որ եօթը
տարի է. արցունքից աչքիս լոյսը կտրւել է:

Բայց աղջիկը ուշ չի դարձնում, վեր է կենում,
դուռը բաց է անում, Աշըլ Ղարիբին ներս է
թողնում: Աշըլ Ղարիբը, ինչպէս սովորութիւն է,
մօր ձեռքը համբուրում է, նստում. ապա սրտի
յուզմունքը ծածկելով աչք է ածում չորս կողմը:
Ու տեսնում է պատից կախւած է իր քաղցրա-
նչիւն սազը, փոշոտ պարկի մէջ պահած:

—Այդ ի՞նչ է քաշ արած պատից, —հարցնում
է մօրը:

—Շատ հարցասէր հիւր ես երկում, —պատաս-
խանում է պառաւը, —դեռ շնորհակալ կաց, որ մի
կտոր հաց են տալիս և վաղը ողջ ու առողջ
պիտի կարենաս ճամփէդ գնալ:

—Հօ քեզ ասի, որ դու իմ մայրն ես, սա էլ
բոյրս, դրա համար ինդում եմ ասես՝ այս ի՞նչ
է կախած պատից:

—Ամպ է, սազ, —բարկացած պատասխանում
է պառաւը:

—Իսկ սազն ի՞նչ է:

—Սազը ածելու և երգելու համար է:


Ու Աշըլ Ղարիբը խնդրում է, թոյլ տայ,
բոյրը ցած բերի սազը, որ տեսնի:

—Զի կարելի, —պատասխանում է պառաւը, —
սա իմ գժբախտ տղիս սազն է. ահա եօթը
տարի է, քաշ է արած պատից և մարդու ձեռք չի
դիպել նրան:

Բայց բոյրը վեր է կենում, ցած է բերում
սազը ու տալիս է նրան: Այն ժամանակ Աշըլ
Ղարիբը աչքերը երկինք բարձրացրած աղօթում է.

—Ով ամենակարող Ալլահ, թէ որ մուրազին
պիտի հասնեմ, թոն իմ եօթսիմեայ սազս այնպէս
հարազատ հնչի, ինչպէս այն վերջին օրը: —Զար-
կում է պղնձէ սիմերին, անուշ հնչեցնում և սկ-
սում երգել:

—Ես մի աղքատ Ղարիբ եմ, խօսքերս ել
ինձ պէս աղքատ են, բայց մեծ Խըզը ելեասը
ինձ օգնեց, բարի գլխից ած բերեց: Թէկ ես
աղքատ եմ ու ինձ անձնութեան պէս պատ



են, բայց, ով մայր, ճանաչիր քու պանդխտին: Այստեղ մայրը լաց է լինում ու հարցնում է նրան:

—Անունդ ի՞նչ է:

—Ռաշիդ (պարզ սիրտ մարդ):

—Մէկ ասա, մէկ ականջ գիր, Ռաշիդ, —ասում է մայրը, —քու խօսքերով գու իմ սիրտը կտոր-կտոր արիր: Գիշերս ես երազ տեսայ, որ զիմիս մազերը սիպտակել էին: Ահա եօթը տարի կինի, որ արցունքից կուրացած եմ: Ասա ինձ դռւ, որ տղիս ձայնն ունիս՝ Երբ կզայ բալէս:

Ու երկու անգամ արցունք քամելով կը կնում է իր խնդիրը: Աշը Ղարիբը զուր էր ասում, թէ ինքն է նրա սրդին, պառաւը չէր ուզում հաւատալ: Մի քիչ յետոյ Աշը ինդրում է.

—Սազը առւր, մայրիկ, գնամ. լսեցի, որ այստեղ մօտիկ հարսանիք կայ. քոյրիկս ճամփէն ցոյց կտայ: Կերգեմ, կածեմ և ինչ որ կաշխատեմ, կրերեմ, ձեզ հետ բաժին կանեմ:

—Չեմ թողնի, —պատասխանում է պառաւը, —այս օրից, ինչ որ տղաս գնացել է, սազը տանից դուրս չի եկել:


Բայց Աշը սկսում է երդւել, թէ մի սիմն էլ չի փշացնիլ:

—Իսկ թէ որ, բան է, թէ կուզ մի սիմը կտրվի, —շարունակում է Աշը, —իմ ամբողջ կարողութիւնս ձեզ հալալ լինի:

Պառաւը շօշափում է նրա պարկը և զգալով որ մէջը լիբը ոսկի է, թողնում է, որ գնայ: Քոյրը նրան տանում է մինչև այն հարուստ տունը, ուր հարսանիքն է լինում, բայց ինքը չի մտնում, մնում է դռանը կանգնած, որ լսի: Թէ ինչ է լինելու:

* * *

Այս տանը Մահուլ-Մեհրին էր ապրում և այդ գիշեր նա Խուրշուդ բէկի կինը պիտի դառնար: Խուրշուդ բէկը իր ազգական-բարեկամների հետ նստած քէֆ էր անում, իսկ Մահուլ-Մեհրին իր ընկերուհիների հետ միասին նստած էր շքեղ վարագոյրի ետևը, մի ձեռքին թոյնով լի թաս բռնած, միւսում կտրուկ խանչալ. նա երդւել էր մեռնել, բայց Խուրշուդ բէկի կինը չդառնար: Եւ ահա լսում է վարագոյրի ետևից, որ մի անձանօթ մարդ եկել, ասում է.



տի ունենան աշուղներն ու պարողները: Դէ մի
բան երգիր, աշուղ, մի բուռը ոսկի կտամ քեզ:
Ապա աւելացնում է.

— Անունդ ինձ բախշիր, ճամփորդ ախպէր:

— Եինդի գեօրքը ըզ (շուտով կիմանաք):

— Այս ինչ տեսակ անուն է, — բացականչում է:
Խուրշուդ բէկը ծիծաղելով, — ճշմարիտ, առաջին
անգամն եմ լսում:

— Սալամ ալե-
քիւմ, գուք այստեղ
ուրախ բէֆ էք
անում, ես մի աղ-
քատ ղարիբ մարդ
եմ, թողէք՝ ես էլ
սեղան նստեմ, գրա
փոխարէն երգեր
կերգեմ ձեզ համար:

— Ինչու չէ,
ինչու չէ, — ասում
է Խուրշուդ բէկը, —
այստեղ հարսանիք
է և ազատ մուտք պի-

— Ծնւելուս օրը, հարեանները մեր դուռն եկել
հարցնելիս են եղել՝ Աստւած տղայ է բախշել, թէ
աղջիկ: Մերոնք պատասխանել են՝ շինդի գեօրքը-
ուզ (շուտով կիմանաք): Եւ ահա, երբ ծնւել եմ,
այս անունն են դրել ինձ, — ասում է, սազն առ-
նում ու երգում:

— Հալէպ քաղաքում Մըսրայ գինի էի խմում,
բայց Աստւած ինձ թեեր տւաւ ու երեք օրում
այստեղ հասայ:

Խուրշուդ բէկի եղբայրը, որ մի աաքարիւն
մարդ էր, հանում է խանչախն ու գոռում:

— Անւտ ես ասում, ի՞նչչէս կարելի է երեք
օրում Հալէպից այստեղ գալ:

— Դու ինձ ինչի՞ ես ուղում սպանել, — ասում
է Աշըզը, — երգիխերը սովորաբար աշխարհի չորս
կողմից հաւաքւում են մի տեղ. ես հօ ձեզանից բան
չեմ առնում. կուզէք. հաւատացէք, կուզէք, մի
հաւատաք:

— Թող շարունակի, — ասում է նորափեսան,
ու Աշըզ Ղարիբը նորից երգում է.

— Առաւոտեան նամազն արի էրզինկեանի
հովառում, ճաշւայ նամազը կատարեցի էրզում

քաղաքում. արկի մայր մանելուց առաջ նամազ
արի Ղարսում, իսկ իրիկւայ նամազը՝ այստեղ
Թիֆլիսում։ Ալլահն ինձ թեկր տւաւ, թույ ու
հասայ. մատաղ լինեմ սպիտակ ձիուն. նա այնպէս
էր սլանում, ինչպէս լարախաղացը պարանի վրայ,
սարից ձոր, ձորից սար. Մէւլան (մեր Տէրը) Աշրդին
թեկր տւաւ ու նա հասաւ Մահուլ-Մէհրիի հար-
սանիքին։

Այստեղ Մահուլ-Մէհրին ճանաչում է նրա
ձայնը, թոյնը մի կողմն է շպրտում, խանչալը
միւս կողմը։

—Խօսքդ այդպէս պահեցիր հա, —ասում է ընկե-
րուհիներից մինը, —այս գիշեր դու Խուրշուդ բէկի
կինը պիտի դառնաս հա։

—Դուք չճանաչեցիր, բայց ես ճանաչեցի իմ
սիրած ձայնը, —պատասխանում է Մահուլ-Մէհ-
րին ու մկրատն առնում, վարագոյրը կտրում է:
Երբ մտիկ է անում, լաւ ճանաչում է իր Աշր
Ղարիբին, ճշում է ու վզովն ընկնում և երկուսն
էլ ուշքից գնում են։ Խուրշուդ բէկի եղբայրը
խանչալը ձեռին յարձակում է նրանց վրայ,
ուզում է երկուսին էլ սպանի. բայց Խուրշուդ

բէկը չի թողնում։

—Հանգստացիր մի մոռանայ —ասում է, —ինչ որ
մարդուս ճակատին գրւած է, այն էլ կլինի։

Մահուլ-Մէհրին, որ ուշքի է գալիս, ամօթից
կարմրում է, երեսը ձեռքով ծածկում, թաք է
կենում վարագոյրի ետեւը։

—Հիմի, հաստատ երեսում է, որ դու Աշր
Ղարիբն ես, —ասում է նորափեսան, —բայց ասա
տեսնենք, ինչպէս եղաւ, որ այն ահագին տա-
րածութիւնը այսպէս կարճ ժամանակում կտրեցիր,
հասար։

—Թէ ասածներս ճշմարտութիւն է, —պատաս-
խանում է աշուղը, —թուրս քարը երկու կէս կա-
նի. իսկ թէ սուտ եմ ասում, թող մազից էլ
աւելի բարակի վիզ։ Բայց ամենից լաւն է, մի
կոյը կին բերէք, որ եօթը տարի տեսած չլինի,
ու ես նրա աշքերը բաց կանեմ։

Աշր Ղարիբի քոյրը, որ դուանը կանգնած
այս ամենը լսում էր, վազում է մօքը մօտ։

—Մայրիկ ջան, —ճշում է, —մեր հիւրը իս-
կապէս իմ եղբայրն ու քու որդին Աշր Ղարիբն է,
պատասի ձեռքը բռնում, տանում է հարսանիքը։



Աշըղ Ղարիբը հա-
նում է հողը ծոցից
ջրի մէջ խառնում
ու մօլը աչքերին
քսում, ասելով.

—Թող ամենքն
իմանան, ինչքան
զօրաւոր ու մեծ է
Խզը Ելեասը, -և մօր
աչքերը բացւում են:

Դրանից յետոյ
ամեն կասկած փա-
րատում է և, Խուր-
շուդ բէկը գեղեցիկ
Մեհրին անմռունչ
զիջում է Ղարիբին:

Այստեղ Աշըղ Ղարիբը ուրախացած ասում է,
—Կսիր, Խուրշուդ բէկ, ես ուզում եմ քեզ
միսիթարեմ: Քոյրս ոչնչով պակաս չի բու հարս-
նացւից. ես հարուստ եմ և նա պակաս ոսկի ու
արծաթ չի բերի հետք. արի, նրան էլ դու առ
և դուք էլ այնպէս բախտաւոր եղէք, ոնց որ ես
ու իմ անգին Մահուկ Մեհրին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0319660

11483

12-3992

ԿԱՐ. ՄԻՒԻԱՆԵԱՆԻ

աշխատութեամբ լոյս են տեսել մանկական ընթեր-
ցանութեան հետեւեալ զքքոյկները՝



<i>ՀՐԱՄԱ. ՔՊՀՐԱ. ՀՆՈՒՅՆ</i>	<i>ԴԲՆԱԿ</i>	<i>ԳԻՆԸ</i>
<i>ՀՐԱՄԱ. ՔՊՀՐԱ. ՀՆՈՒՅՆ</i>		
Ա. Ի. Ռւեկանովա—Նոր մայրիկո	10 կ.	
Փ. Մ. Դոստուկի—Յիսուսի տօնածառը	10 կ.	
Օսկար Ռւայլդ—Արքայադուստրն ու թզուկը	10 կ.	
Օսկար Ռւայլդ—Աստղամանուկ	10 կ.	
<hr/>		
<i>ՀՆՈՒՅՆ</i>		
Կ. Լ. Լուկաչեիչ—Քեռի Մկօ (պատկերազարդ)	20 կ.	
Սնդէրսէն—Մայրը	12 կ.	
<hr/>		
<i>ՀՐԱՄԱ. ՔՊՀՐԱ. ՀՆՈՒՅՆ</i>		
Օսկար Ռւայլդ—Եսասէր հսկան. պատկերա- զարդ (2-րդ տիպ)	1 կ.	
Իւլեա Բեղրօդնայա, -Բարեսէրտ Գողիաթը	1 կ.	
Ա.քւա. Առաջին ձնձաղիկները	1 կ.	
Մ. Լերմոնտով,—Աշբ Ղարիբ (պատկ.)	2 կ.	
Ա. Սերաֆիմովիչ—Կաթիլը	1 կ.	
<i>Շուտով լոյս կտեսնեն</i>		
Օսկար Ռւայլդ—Պատանի թագաւորը		
Մ. Լագէրլիօֆ—Նազարէթում		